ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«17» հուլիսի 2017 թվականի № 90-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով «Արինչո» ՍՊ ընկերության 2017թ փետրվարի 13-ի թիվ 7 դիմումը, հանքավայրի շահագործման նախագծի 2017թ հունիսի 5-ի «շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-54, ինչպես նաև 2017թ մայիսի 11-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1016 փորձաքննությունների դրական եզրակացությունները և ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Արինչո» ՍՊ ընկերության 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/560 թույլտվությունը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի 1.X=4478428.9 Y=8407673.1, 2.X=4478379.4 Y=8407823.6, 3.X=4478150.1 Y=8407785.2, 4.X=4478170.8 Y=8407692.9, 5.X=4478273.7 Y=8407704.4 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) արդյունահանում կատարելու նպատակով, հատկացնելով՝ 271370.0 մ^3 տուֆի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-560 լեռնահատկացման ակտով տրված տարածքի՝ 1.X=4478428.9 Y=8407673.1 H=1929.0 (h=-11.0), 2.X=4478379.4 Y=8407823.6, H=1935.0 (h=-11.0), 3.X=4478150.1 Y=8407785.2, H=1900.0(h=0), 4.X=4478170.8 Y=8407692.9, H=1895.0(h=0), 5.X=4478273.7 Y=8407704.4, H=1913.0 (h=-3.0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված 2.7 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 4738.1մ^3 տուֆի արդյունահանվող զանգված:

3. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ